ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-Ջ/001

ք.Երևան «01» դեկտեմբերի 2015թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ. Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝Պատվիրատու), մի կողմից, և Կոտայքի մարզի Եղվարդի N 1 ավագ դպրոց ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ռազմիկ Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել ծառայություն (այսուհետև՝ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածով սահմանված Տեղնիկական բնութագրի պահանջների:

1.2. Ծառայության մատուցման ժամկետն է 2015 թվականի դեկտեմբերի 1-ից՝ անժամկետ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները.

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը, Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 ծառայության, արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել սույն պայմանագրի 3.1 կետում նշված գնին համապատասխան գումարը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարը.

2.4. Կատարողը պարտավոր՝

2.4.1 սույն պայմանագրի հավելվածով սահմանված պայմաններով ապահովվել ծառայության պատշաճ որակով մատուցումը.

2.4.2 պատվիրատուի պահանջով 1 օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները.

3. Պայմանագրի գինը

3.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 1խմ ջրի դիմաց 170,3 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ.

3.2. Պատվիրատուն Կատարողին՝ սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված սակագնի համաձայն, յուրաքանչյուր ամսվա օգտագործված ջրի դիմաց վճարում է հաջորդ ամիս՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում.

3.3 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սակագների փոփոխվելու դեպքում, որի ժամանակ կգործի փոփոխված սակագինը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

4.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կայտարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը.

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը.

5.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

5.4 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածը կազմված է 1 էջից և հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի 1 օրինակ:

6.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն	Կարապետի [illegible] Եղեգնաձորի N1 [illegible]
ք.Երևան, Նալբանդյան 13	ք. Եղեգնաձոր, Չարենցի 56
Հ/Հ 900011556355	Հ/Հ 247370040849
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 03304999
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	
_______________ (ստորագրություն) Կ.Տ.	_______________ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
«01». դեկտեմբերի.2015թ. կնքված
N Ե-Ջ/001 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կոտայքի մարզի Եղվարդի N 1 ավագ դպրոց ՊՈԱԿ-ը թույլատրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Եղվարդի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնին իր խողովակից օգտվելու և դառնալու ենթաբաժանորդ: Եղվարդի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնը կտեղադրի ջրի հաշվիչ և պատասխանատու է իր օգտագործած ջրի վճարման համար համաձայն պայմանագրի 3.2 կետի:

Ծառայության անվանում՝ ջրամատակարարում:

Ծառայության արժեք՝ 1 խորանարդ մետրի դիմաց 170,3 ՀՀ դրամ (մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն	Կոտայքի մարզի Եղվարդի N1 ավագ դպ.
ք.Երևան, Նալբանդյան 13	փ. Եղվարդ, Չարենցի N56
Հ/Հ 900011556355	Հ/Հ 24737004084 9
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 03304999
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Մ. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S.	Կ.S.